ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԵՐՎԱՆԴԻ «ԵՐԵՎԱՆԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ» թեմայով ԺԸ.00.01 «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԵՐՎԱՆԴԻ ատենախոսությունը «ԵՐԵՎԱՆԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ» բաղկացած է Ներածությունից, երեք գլուխներից, երեք գլուխների և ընդհանուր եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքը բախկացած է 118 տեքստային էջերից ընդգրկելով նաև 67անուն օգտագործած ցանկից, ինչպես նաև 46 աղյուսակ պարունակող հավելվածից:

Հղումները պատկերաշարին, գրականության ցանկին հիմնականում իրականացված են ճիշտ ըստ պահանջի և տողատակում առանձին դեպքերում:

Ներածության մեջ ներկայացվում է թեմայի արդիականությունը, նպատակը, խնդիրները, տեսական և մեթոդական հիմքը, գիտական նորույթը, գիտական և գործնական մշանակությունը:

Առաջին գլուխը ներկայացված է երկու բաժիններով, որոնք են՝ Հարմարվողական վերաօգտագործման էությունը, նպատակը, մեթոդներն ու սկզբունքները. Պատմատեսական ակնարկ և Վերահարմարողականության տեսությունը ճարտարապետական պրակտիկայում:

Երկրորդ գլուխը ներկայացված են երկու բաժիններով, որոնք են՝ Խորհրդային ժառանգություն հանդիսացող հասարակական շենքերի հարմարեցման առանձնահատկությունները և Հասարակական շենքերի հարմարեցման համապարփակ հետազոտություն (ընտրված օրինակներով):

Երրորդ գլուխը ներկայացված է մեկ վերնագրով՝ ,,Արտադրական շինությունների ռեգեներացիայի միտումները Երևանում անկախության տարիներին,,:

Բոլոր գլուխներն էլ ավարտվում են եզրակացություններով: Վերոհիշյալ պարբերությունը շարունակվում է ,,Ընդհանուր Եզրակացություններ,, առանձին բաժնով:

Ատենախոսության վերջում գրականության ցանկն է: Քանի որ իր աշխատանքները սկսել է իր անձնական փորձով և գրականության ցանկում եղած նյութերի քնությամբ, դիտարկենք գրականության ցանկը:

1. **Գրականության ցանկը** հիմնականում 2000թվականից հետո հրատարակություններ են, որը դրական է արժեքավորում հեղինակի ընտրությունը, սակայն որոշ հոդվածներում միշտ չէ որ դիտարկված են բոլոր խնդիրները որոնք պարտադրված են վերփոխման անհրաժեշտ գործընթացները սկսելու նպատակով թույլատրություն ստանալու համար: Օրինակ՝ 56 և 57 Sim J: Bohannon CL, Miller P. What Park Visitors Survey Tells Us: Comparing Three Elevated Parks The High Line, 606, and High Bridge. Sustainability., 12(1), 2020, P. 121. https://doi.org/10.3390/su12010121 Սա լավ օրինակներ են , սակայն նման երկրներում էժանության համար պետք հաշվի առնել նաև շրջակա միջավայրի աղտոտման գնահատականը՝ սահմանային արժեքը (ՇՄԱԳ): Որը հեղինակը չի նշում որևէ տեղ ատենախոսության ամբողջության մեջ:
2. Մի այլ դեպքում էլ 53. Podestà, S., Romis, F. and Scandolo, L., CONSOLIDATION AND RESTORATION OF HISTORICAL HERITAGE: THE FLAVIAN AMPHITHEATER IN ROME., Arch. Photogramm. Remote Sens. vol. 19, 1999, pp. 885–892. Տիպական օրինակ է, որը համապատասխանում է թեմային, սակայն անհասկանալի ձևով նորից ներկայացվում է հունահռոմեական հուշարձանի վերականգնման նպատակահարմարության, այն դեպքում, երբ Երևանում գործնականում ամենահին շենքերը 19-րդ դարով են թվագրված: Ավելին միակ հունահռոնեական ճարտարապետությանը հարազատ հուշարձանը Գառնիի տաճարն է և եթե հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերվի մեկ այլ նմանատիպ

հուշարձան ապա Սահինյանը իր նախանձախնդիր հետևողականությամբ վերականգնման հետ առնչվող շինարարա-ճարտարապետական հրաշալի ժառանգություն է թողել, որից կարելի է օգտվել: Եթե ատենախոսության մեջ նա չի օգտագործում նշված հոդվածում բացակայող տեխնոլոգիական նորագույն հայտնագործությունները վերակառուցման նպատակով շինարարության մեջ՝ անհասկանալի է **ատենախոսության ծանրաբեռնվածության անհարկի տեղադրումը:**

3. 55-ը հնարավոր չէ գտնել, որովհոտև հեղինակը վերնագրի մեջ իմաստաբովանդակային սխալ է թույլ տվել Asian Architecture and Building Engineering, 2024 փոխարեն Journal of Asian Architecture and Building Engineering
4. Гончарова, Н.Н., КОМПОЗИЦИЯ "СТЕПИ" А.П. ЧЕХОВА И АРХИТЕКТУРА ХРАМА ВАСИЛИЯ БЛАЖЕННОГО (ЛИНГВОСЕМИОТИЧЕСКИЙ ПОДХОД), Вестник Удмуртского университета. Серия «История и филология», Т.32, вып. 2, 2022, с.326-334. Սա ընդհամենը խոհափիլիսոփայական աստվածաբանական տեքստ է, որտեղ հեղինակը փորձում է նկարագրել թե հին հրեական տեքստերը ինքնին «տաճար է». купцы, пошли на «обновление… храма» [7, т. 1, с. 1005]. Связь между пряником и деньгами установлена в лавке великоросса (см. [31]) Книга пророка Амоса, третий Рим, новый Израиль. Որևէ կապ Երևանի արտադրական տարածքների վերաձևավորման՝, և այդ ընթացքում շինարարական կոնստրուկցիաների ու նորանյութերի մասին՝, ոչ մի խոսք: Բացարձակապես անտեղի է գրականության ցանկում նման հոդվածը
5. 10-ից 16-ը և 18, արդյունաբերական տարածքների գործառույթային փոխակերպման խնդիր են առաջ քաշվում, որոնք մասնակիորեն են առնչվում ատենախոսի ընտրած թեմային
6. 9. Միացյալ Թագավորության կառավարություն, Բրիտանական դեսպանատուն Երևանում, 2021: Անհասկանալի է սա հոդված է, գիրք, թե մեկ այլ տպագրված նյութ, կամ ԶԼՄ-ներում տեղադրված նյութ: Նույն խնդիրն ենք տեսնում Ֆրանսիայի և Գերմանիայի դեսպանատների հետ կապված ներկայացմանը

7. Ալոյան Ա.Ա., Սաֆարյան Յու.Ա., Թովմասյան Ս.Ա., Մուրադյան Ջ.Ն., Հայաստանի հանրապետության տարածքի էկոլոգիական հիմնակմախքի եվ քաղաքաշինական-տնտեսական զարգացման փոխկապակցվածության հիմնախնդիրները, ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ. Հ.III (54), 2014, էջ 13-21: Այս հոդվածի վերնագրում պարզ նշված է, որ խոսքը ապագայում կառուցվելիք տարածքներին է վերաբերվում, Իսկ Երևան քաղաքում բնական էկոհամակարգեր՝ նույնիսկ այգիներում, ընդերքում և Զանգվի ձորում կենսատոպը և կենսացենոզը արմատապես փոփոխված են անթրոպոգեն միջավայրի:
8. Petrosyan S.E., Environmental spatial planning problems in the case of reused buildings // Actual scientific research in the modern world Issue 3(107). 2024, pp. 295-301. Էկոլոգիայի և շրջակա միջավայրի ազդեցություն. 48 Petrosyan S.E., Modern trends in functional transformation of abandoned public areas. // Actual scientific research in the modern world. Issue 4(108) part 2. 2024, pp. 242-248. Յհոդված որրտեղ խոսվում է հասարակական կառույցների վերաիմաստավորելու հասարակական պահանջների ծիրում, 56,57 Sim J, Bohannon CL, Miller P. What Park Visitors Survey Tells Us: Comparing Three Elevated Parks The High Line, 606, and High Bridge. Sustainability., 12(1), 2020, P. 121. https://doi.org/10.3390/su12010121
   Սրանք լավ օրինակներ են , սակայն նման երկրներում էժանության համար պետք հաշվի առնել նաև շրջակա միջավայրի աղտոտման գնահատականը՝ սահմանային արժեքը: Էկոլոգանոոսֆերային նախնական հետազոտություններ նախագծային փուլում, կամ ՇՄԱԳ՝ **այլ բառակապակցությունները ճիշտ չեն:**
9. Stubbs, J.H. and Thomson, R.G., Architectural Conservation in Asia National Experiences and practice, 2017, P. 581. Կրկին բացակայում են հրատարակչությունը, երկիրը էջերը նույնը 60-ում և 66-ում
10. 62-ում հասկանալի չէ վերակառուցման շինարարական նախագիծ է թե ոչ, : Վերականգնող կազմակերպությունը և նախագծի հեղինակները ովքեր են

Պատկերների առումով

11. Հրաշալի օրինակներ են պատկեր 3, 1.1 վերափոխված տեսքը և խորհրդանշական նույնը՝ պատկեր պատկեր 4,5, 16,
12. Պատկեր 20-ում, գուց և շենքի, կամ շինության նախնական տեսքի լուսանկարը դրվեր:

Ընդիմախոսի «Կարծիքի» ձևավորման հիմքերը

Գրականության վերլուծությունը ինձ ստիպում է մտածել որ ատենախոսության մեջ հայտնված մի քանի անտեղի աղբյուները պատճառ են ատենախոսության պաշպանության գործընթացների ձգձգմանը և մոտեցումների փոփոխությանը, որը միանգամայն հասկանալի է բնական պատճառներով, ղեկավարների պարտադրված փոփոխություններին:

Սակայն ատենախոսը կարողացել է բազմակողմանի հետազոտությունների և սեփական դիտողունակության արդյունքում աշխատանքն հասցնել ավարտին: Դա պարզ երևում է հեղինակի կողմից իրականացված մանրակրկիտ վերլուծությունից, որտեղ ընդգծված են անմիջական մեկ շենքի վերաիմաստավորման (Կոլխոզ շուկա էջ71-74) որտեղ նակարողացել է մանրակրկիտ ներկայացնել ինչպես հասարակակն պահանջը, այդ պահանջի իրականացման արդյունքում քաղաքաշինական զարգացման գործընթացներին համարժեք արձագանքելու իր ընդունակությունը և նշելու այն թերությունները որոնք ծագել են գործառույթային և լոգիստիկ տեսանկյունից, այդ թվում և հասարակական մի առանձին խավի իրավունքների որշակի անտեսմանը(*Ոչ ֆորմալ վաճառողների տեղահանում էջ73)*:

Ատենախոսության «ԵՐԵՎԱՆԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ» թեման ինքնին արդեն ճարտարապետական խնդիրներ առաջ քաշելուց զատ նաև զուտ և գերակշիռ ծավալով քաղաքաշինական և շինարարական խնդիրներ է առաջադրում, որոնց նա մասնակիորեն անդրադարձել է ատենախոսության մի շարք հատվածներում, սակայն ոչ ի վնաս քաղաքի ճարտարապետական ընդհանու տեսքին:

Որոշ գիտական աղբյուրներ համացանցում չեն բացվում: Դրանք հավանաբար հնության հետևանք են; Անհրաժեշտ է տեքսի էլետրոնային հասցեի վերջում նաև նշել տարեթիվը, երբ է վերջին անգամ հեղինակը երբ է օգտվել:

Հեղինակը 77 էջում նշում է *Ծախսերի արդյունավետության* հանգամանքի առումով հայտնի է, որ հարմարվողական վերօգտագործումը հաճախ առավել ծախսարդյունավետ է, քան ամբողջովին նոր շենքեր կառուցելը, ինչը այն դարձնում է նյութական միջոցների իմաստով առավել կենսունակ տարբերակ,, ապա 78 էջում անդրադարձ է կատարում ,,*Կայունություն.* Գոյություն ունեցող կառույցների օգտագործումը նվազեցնում է շրջակա միջավայրի վրա ազդեցությունը՝ նվազագույնի հասցնելով քանդման հետևանքով գոյացած թափոնները, այն դեպքում երբ պետք է ընդհամենը վկայակոչեր ՇՄԱԳԻ համար ՀՀ կառավարական մարմնի տրված արտոնագիրը, որի արդյունքում էլ կայացել են շինարարական աշխատանքները:

Այսքանը:

Կարծում եմ, որ ատենախոսը ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԵՐՎԱՆԴԻ բավարար մասնագիտական կարողություններ ունի և ատենախոսությունը «ԵՐԵՎԱՆԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ» ԺԸ.00.01-

« Ճարտարապետություն» մասնագիտությամբ Ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար բավարարում է ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն» մասնագիտությամբ Ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան շնորհմանը:

Ճ.դ., Ավագ գիտաշխատող
ԳԷԿ ամբիոնի պրոֆեսոր

Ս.Մ.Շահինյան
24. 12. 24

Ս.Մ. Շահինյանի ստորագրությունը
Հաստատում եմ՝ ՃՇՀԱՀ գիտական
քարտուղար տ.գ.թ, դոցենտ Լ.Հ.Լևոնյան